ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

21 հուլիսի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Արայիկ Աբասյանը, Մարինե Առաքելյանը, Արմինե Կիրակոսյանը, Լուսինե Ղազարյանը, Հակոբ Մելքոնյանը, Վարդան Միրզախանյանը, Սարիբեկ Մկրտչյանը, Կարեն Պետրոսյանը, Արմինե Պողոսյանը, Սեվան Սեփխանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝՝ Ղազար Ղազարյանը

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝՝ Վարսենիկ Վարդանյանը

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 65-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 02-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 158-րդ կետով.

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 21-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 64-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻԱ ԱԶԱՏՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006

թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման պահանջներով, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիա, ստանալու նպատակով.

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն 2024 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային հայտերին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 65-Ա)*

Ավագանու անդամներ

ՀԱՅՐԱՊԵՏ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՄԵԼԱՆՅԱ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՂԱՋԱՐ ՂԱՋԱՐՅԱՆ

ՄԱՐՅԱՄ ՄԱԿԱՐՅԱՆ

ՍԵՅՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՆԱՐԵԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՇԱՀԵՆ ՇԱՀԻՆՅԱՆ

Համայնքի ղեկավար՝

ՂԱՋԱՐ ՂԱՋԱՐՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Վարսենիկ Վարդանյանը

_____